

7. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վիճակագրության բնագավառում համագործակցությունը ներառել է տեղեկատվության և փորձի փոխանակումը, ինչպես նաև ներուժ ստեղծելու նպատակով՝ դրանց տարածումը վիճակագրական տվյալների հետագա օգտագործման համար, ինչն արտահայտվել է ինչպես միջազգային փորձագետների և աշխատանքային խմբերի այցելություններով, այնպես և համագործակցության կատարելագործմանն ուղղված համապարփակ ծրագրերի իրագործմամբ:

Ծառայությունը շարունակել է ակտիվ մասնակցությունը միջազգային համագործակցության շրջանակում համաաշխարհային մասշտաբով վիճակագրական մեթոդաբանության և գործիքակազմի կատարելագործման, ներդաշնակեցման ու միասնականացման, տարբեր երկրների վիճակագրական ծառայությունների կողմից պաշտոնապես հրապարակվող վիճակագրական ցուցանիշների համադրելիության ու փոխանակման ապահովման ուղղությամբ, որոնց շրջանակում Ծառայությանն է տրամադրվել նաև տեխնիկական, ֆինանսական և խորհրդատվական օժանդակություն:

Ըստ այդմ, հաշվետու ժամանակահատվածում Ծառայության կողմից իրականացվել են հետևյալ նախագծերը.

1. Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ՏԱՄԻՍ ծրագրի շրջանակում.

«Վիճակագրություն 6» պայմանագրի ներքո.

- 1.1. գյուղատնտեսության վիճակագրություն,
- 1.2. բիզնես-ռեզիստր,
- 1.3. աշխատանքի շուկայի վիճակագրություն,
- 1.4. հրապարակումներ և վիճակագրական տեղեկատվության տարածում,
- 1.5. վիճակագրական դասակարգումներ,

«Վիճակագրություն 8» պայմանագրի ներքո.

- 1.1. տրանսպորտի վիճակագրություն,
- 1.2. գների վիճակագրություն,
- 1.3. ֆինանսների վիճակագրություն,
- 1.4. աղքատության վիճակագրություն,
- 1.5. սարքավորումների ձեռք բերում,

2. Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամի հետ համատեղ.

2004թ., 2005թ., 2006թ. «ՄՈՆԵԵ» շարքի տարածաշրջանային մոնիթորինգային զեկույցներ,

Փոքրամասնությունների հարցերի վերաբերյալ ուսումնասիրություն,

Սնուցման ազգային հետազոտություն,

ԳԵՎԻՆՖՈ տվյալների բազայի տարածում,

3. Միավորված ազգերի կազմակերպության Բնակչության Հիմնադրամի հետ համատեղ.

«Հայաստանում կանանց, տղամարդկանց և երիտասարդների վերարտադրողական առողջության բարելավման հետազոտություն /ARM/01/P01/» ծրագիր,

4. Համաաշխարհային բանկի ֆինանսավորմամբ.

- 4.1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև «Աղքատության կրճատման ռազմավարության կարողությունների ստեղծման ֆինանսավորման համար TF 050823» բազմադոնոր դրամաշնորհի միջոցների հաշվին «Աղքատության մոնիթորինգ. Հայաստանի Հանրապետության տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջականացված հետազոտություն»,
- 4.2. Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև տեխնիկական աջակցություն վիճակագրական կարողությունների զարգացման համար հոլանդական TF054516 դրամաշնորհի միջոցների հաշվին.
- 4.2.1. Վիճակագրական համակարգի ռազմավարական և ֆինանսական կառավարում,
- 4.2.2. Ինստիտուցիոնալ վիճակագրական համակարգ,
- 4.2.3. Բիզնես-ռեզիստրի ձևավորում,
- 4.2.4. Ազգային հաշիվների կատարելագործում,
- 4.2.5. Ռեգիոնալ վիճակագրական համակարգի ներդրում,
- 4.2.6. Գների վիճակագրության կատարելագործում,
- 4.2.7. Հրապարակումներ և տեղեկատվության տարածում:
5. Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ.
- Ամերիկայի Միացյալ Նահանգների Հաշվառումների բյուրոյի փորձագետների աջակցությամբ՝ «Աջակցություն 2001 թ. ազգային մարդահամարին», Սոցիալական բարեփոխումների ծրագրի (ՊԱԴԿՈ) հետ համատեղ՝ Սոցիալ-տնտեսական և առողջապահության վիճակագրության կայուն հաշվետվական ընթացակարգի զարգացում. տնային տնտեսությունների հետազոտության հարցազրուցավարների հրահանգավորում, հանրության հետ կապերի բաժնի հիմնում, մարզերի հաշվարարների ուսուցում, գրքույկի հրատարակում, «ՕՐԿ ՄԱԿՐՈ ինթերնեյշնլ ինկ.» կազմակերպության փորձագետների աջակցությամբ՝ «2005թ. Հայաստանի ժողովրդագրական և առողջության հետազոտություն»,
6. Շվեդական միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ. Շվեդիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյի հետ համագործակցության նախագիծ «Սոցիալական վիճակագրությունը Հայաստանում» խորագրով՝ ժողովրդագրական վիճակագրություն, հաշմանդամների կենսապայմանների վիճակագրություն, շրջակա միջավայրի վիճակագրություն, գյուղացիական տնտեսությունների ռեզիստր, ժամանակի օգտագործման հետազոտություն:
7. Աշխատանքի միջազգային կազմակերպության ֆինանսավորմամբ. Աշխատանքի միգրացիայի հետազոտություն,
8. Անդրկովկասում թմրամիջոցների դեմ պայքարի շրջանակում Եվրոպական Միության և Միավորված Ազգերի զարգացման ծրագրի համաֆինանսավորմամբ՝ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հետ

համատեղ. Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում ծխախոտի, ակոհոլի, թմրամիջոցների տարածվածության և օգտագործման վերաբերյալ հետազոտություն:

9. «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» ծրագրի, Ջրուսաշրջության զարգացման հայկական գործակալության և Ծառայության միջև համագործակցության շրջանակում՝ «Տուրիզմի վերաբերյալ հետազոտություն»:

10. Միավորված ազգերի զարգացման ծրագրի հետ համատեղ.

Մարդկային զարգացման ազգային զեկույցներ,

«Հազարամյակի զարգացման նպատակների տեղայնացումը և առաջընթացը» ազգային զեկույց:

11. «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ի և Ծառայության միջև համագործակցության շրջանակում.

«Կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն»

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայություն են այցելել թվով 46 հանձնախմբեր և 69 փորձագետներ (այդ թվում, 2004թ.՝ 16 (22), 2005թ.՝ 8 (17), 2006թ.՝ 22 (30)), ի մասնավորի. Համաշխարհային բանկից, Արժույթի միջազգային հիմնադրամից, Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունից, Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովից, Եվրամիության վիճակագրական ծառայությունից, Ամերիկայի Միացյալ Նահանգների Հաշվառումների բյուրոյից, Ամերիկայի Միացյալ Նահանգների ՕՐԿ ՄԱԿԲՈ ինթերնեյշնլ ինկ. կազմակերպությունից, Գերմանիայի ԱյՍիՕուԷն-Ինստիտուտ կազմակերպությունից, Շվեդիայի, Ֆինլանդիայի, Ռումինիայի, Վազախստանի, Վրդստանի վիճակագրական ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ տեխնիկական և խորհրդատվական օժանդակություն ցուցաբերելու և/կամ աշխատանքային քննարկումներ կազմակերպելու նպատակով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագրի մշակման աշխատանքները կազմակերպելու մասին» թիվ 743-Ա որոշման՝ Ծառայության աշխատակիցները մասնակցել են վերոնշյալ ծրագրի մշակման աշխատանքներին:

Ծառայությունը մասնակցել է Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակում Եվրամիություն-Հայաստան գործողությունների ծրագրի համար վիճակագրության մասով առաջարկությունների փաթեթի մշակմանը՝ բնապահպանական վիճակագրության կատարելագործման, ծրագրի մենեջմենթի, գյուղատնտեսության գների ինդեքսի, գյուղատնտեսական համատարած հաշվառման, գյուղատնտեսության վիճակագրության, բիզնես ռեգիստրի կատարելագործման, վիճակագրական դասակարգումների, սպառողական գների ինդեքսի, հետահայաց ժողովրդագրական հետազոտության, ֆինանսական հաշվի մշակման և ներդրման, տնային տնտեսությունների հետազոտության/հանրային ծառայությունների համար բնակչության վճարունակության պահանջարկ-2 փուլ, ներդրումների վիճակագրության, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, աշխատուժի հետազոտության/ աշխատանքային կյանքի որակ/մանկական

աշխատուժ, «Եվրոպական հաշիվների համակարգ-95»-ի ներդրման, ընտրանքային հետազոտությունների մեթոդաբանության կատարելագործման, միգրացիայի, արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի, հրապարակումների և վիճակագրական տեղեկատվության տարածման, գիտատեխնիկական աշխատանքների վիճակագրության կատարելագործման, հյուրանոցների և ռեստորանների ծառայությունների, թրաֆիկինգի, ավտոմոբիլային տրանսպորտի, մասնավոր դրամական փոխանցումների, զբոսաշրջության սատելիտային հաշվի գծով:

Ծառայությունն Անկախ պետությունների համագործակցության Միջպետական վիճակագրական կոմիտեի հետ համագործակցության շրջանակում մշակել և ներկայացրել է առաջարկությունների փաթեթ ձեռնարկությունների էկոլոգիական վարկանիշի համակարգի վարման, էկոլոգիական առողջապահության տեղեկատվական բազաների վարման, էկոռիսկերի վիճակագրության վարման, տեղեկատվական տեխնոլոգիաների, մասնավորապես՝ վիճակագրական տվյալների հիմնապաշարների ստեղծման, աշխարհագրական տեղեկատվական համակարգերի, ռեգիոնալ զարգացման, ինտերնետի միջոցով վիճակագրական տվյալների տարածման, առողջապահական հաստատությունների և առողջարանների վիճակագրության բարելավման, գիտության վիճակագրության բարելավման, հասարակական կազմակերպությունների հետազոտության, աշխատանքային միգրացիայի հետազոտության, պետական և մասնավոր կազմակերպություններում աշխատուժի հետազոտության, «Ընակչության միգրացիա» ընտրանքային հետազոտության, տնային տնտեսությունների հետահայաց ընտրանքային հետազոտության, գների վիճակագրության կատարելագործման, մասնավորապես՝ արտաքին առևտրի բնագավառում, արտադրողների գների ինդեքսների բնագավառում, անշարժ գույքի շուկայում գների հետազոտության, սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար ծառայությունների գների և սակագների հետազոտության, ֆինանսների վիճակագրության, մասնավորապես՝ ֆինանսական հոսքերի մանրամասնեցված հաշիվների, ֆինանսների վիճակագրության բնագավառում տնտեսության ճյուղերի ինտեգրման, ֆինանսական հաշվի տվյալների համախմբման և հաշվեկշռման, արտաքին հատվածի վիճակագրության, զբոսաշրջության սատելիտային հաշվի, դրամական փոխանցումների վիճակագրության, ուղղակի ներդրումների վիճակագրության, հրապարակումների և տեղեկատվության տարածման, բիզնես վիճակագրության. տրանսպորտի, գյուղատնտեսության, ծառայությունների, առևտրի, ներդրումների, բիզնես ռեգիստրի, ազգային հաշիվների վիճակագրության «ծախսեր-թողարկում» աղյուսակների, մակրոտնտեսական ցուցանիշների և սոցիալական ու անհատական ծառայությունների չհաշվառվող մասի գործակիցների ճշգրտման, ակտիվների և պասիվների հաշվեկշռի կազմման վերաբերյալ:

Հայաստանի վիճակագրական համակարգի գործող օրենսդրական դաշտի գնահատման և Եվրամիության օրենսդրությանը համապատասխանեցման մոնիթորինգի իրականացման նպատակով իրականացվել է վիճակագրական մենեջմենթի տեղեկատվական համակարգի (ԷսԷմԱյԷս) ծրագրային փաթեթի ներդրում և համապատասխան տեղեկատվության ներկայացում Եվրամիության վիճակագրական ծառայությանը:

Եվրամիության SUUԻՍ ծրագրի շրջանակում կազմվել է Հայաստանի վերաբերյալ 2003թ. (անգլերեն և ռուսերեն), 2004 և 2005թթ. (անգլերեն) երկրի հաշվետվությունները:

Հաշվետվությունների կազմման նպատակն է նպաստել վիճակագրության դերի բարձրացմանը նորանկախ երկրներում, ինչպես նաև արտացոլել վիճակագրական ծառայությունների կողմից ձեռք բերված արդյունքները: Ձեկույցները ներկայացնում են տարբեր երկրների վիճակագրական ծառայությունների առջև ծառայած ու լուծում պահանջող հիմնախնդիրները և հնարավորություն ընձեռում գնահատելու վիճակագրական համակարգի զարգացման ընթացիկ իրավիճակն ու տեխնիկական աջակցության հետագա ծրագրերի «պահանջարկը»: Հաշվետվությունները տեղեկություններ են պարունակում նաև համագործակցության ընդհանուր գնահատականների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում լրացվել և համապատասխան վիճակագրական ժողովածուներում հրատարակման նպատակով Անկախ պետությունների համագործակցության Միջպետական վիճակագրական կոմիտեին է տրամադրվել ընդհանուր թվով 590 հարցաթերթ (508 էլեկտրոնային և 82 փոստային), որոնցից 128-ը՝ ամսական, 102-ը՝ եռամսյակային, 360-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Ծառայության միջազգային համագործակցությունը տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացվել է նաև վիճակագրական տեղեկատվության ընդլայնված փոխանակությամբ և թղթակցության վարմամբ (թվով՝ 3530, այդ թվում՝ 2004թ.՝ 1190, 2005թ.՝ 954, 2006թ.՝ 1386): Ստացվել են տարեգրքեր, տեղեկագրեր, տեղեկատուներ, մեթոդաբանական ձեռնարկներ, հարցաթերթեր և վիճակագրական այլ նյութեր, որոնք այնուհետ համալրել են Ծառայության բաց գրադարանի ֆոնդը:

Միջազգային համագործակցության շրջանակում տեղի են ունեցել 431 (այդ թվում՝ 2004թ.՝ 149, 2005թ.՝ 113, 2006թ.՝ 169) պաշտոնական հանդիպումներ:

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայության կողմից բանակցություններ են վարվել Եվրամիության վիճակագրական ծառայության, Համաշխարհային բանկի, Շվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության, Ճապոնական միջազգային համագործակցության գործակալության, Միավորված ազգերի կազմակերպության Վիճակագրության բաժնի, Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Միավորված ազգերի կազմակերպության Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի ու Վիճակագրական ինստիտուտի, Ասիական զարգացման բանկի, ինչպես նաև այլ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների (Ֆինլանդիայի, Ավստրիայի, Դանիայի, Հունաստանի, Մեծ Բրիտանիայի, Շվեդիայի, Չեխիայի, Հունգարիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների Հաշվառումների բյուրոյի և այլն) ներկայացուցիչների հետ՝ համագործակցության հնարավորությունների վերաբերյալ: